

Գինույ այս հեղեղը կը բղխէր հայրապետական լայնածաւալ կալուածներէն, որ ընչաքաղց ազնուականաց ոմանց աչքը կը ծակէին (Փաւս. 114). թէեւ ասոնց սեղաններուն վրայ նուազ յորդութիւն չպիտի տեսնենք մեր յետոյ:

Նախ քան վաստակոց գրոց երեւումն Հայոց մէջ, որ գինեգործութեան ընդարձակ դասեր տուաւ անոնց (34-133), ինչպէս կը պատրաստէին անոնք գինին՝ յայտնի չէ: Չեմ ըսեր նիւթական կոխելն «հրձանի» մէջ ոտներով՝ — զոր կը կատարէին արք եւ երբեմն կանայք ալ (անդ, 85. Ալաւ. ՀԲ), մանաւանդ փայտեղէն կամ քարեղէն «նաւի» մէջ, ինչպէս կը կոչէին նաւակածեւ տաշտը (Ալաւ. Է), — այլ արուեստն իսկ: Բայց յայտնի է՝ թէ գինուոյն տրուած այդ կարեւորութիւնը պիտի ուսուցանէր անոնց ճարտար պատրաստութիւն մ'ալ, զոր կրնանք արգիւնքէն գուշակել: Եւ արդարեւ Ագաթանգեղոս շատ լաւ կը ճանաչէ «զրմպելի քաղցր եւ ակոյշ գինի» (376), կամ «զանուշահոտութիւն բաժակօքն քաղցրութեանց» (374). եւ Օճնեցւոյն շրթները կը հպէին այլաբանօրէն — յայտնի թէ իրապէս ալ — «ի ծաղկահոտ գինի» (2): Ասոնց մէջ ակներեւ է անուշարոյր եւ անուշահամ իւղոց իսառ-